ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2016թ. սեպտեմբերի 1-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է <<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. <<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի կանոնադրության պատճեն,
2. կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճեն,
3. շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության պատճենը,
4. տեղեկություններ հայտը ներկայացնելու պահի դրությամբ գործունեության և աշխատանքի փորձի, լիցենզավորվող գործունեության կատարման նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի առկայության ու դրանց տիրապետման, նյութատեխնիկական հագեցվածության փորձաարտադրական տեղակայանքների, սարքավորումների և անալիտիկ գործիքների առկայության, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի (վայրերի) մասին,
5. տեղեկություններ մասնագետների մասնագիտական պատրաստվածության մասին՝ նրանց որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճեններով,
6. պետական տուրքի վճարման անդորրագրի պատճեն:

Հայտատուի կողմից լրացուցիչ ներկայացվել են նաև պարզաբանումներ ս.թ. օգոստոսի 8-ին կայացած միջգերատեսչական հանձնաժողովի նիստի փորձաքննական եզրակացությամբ ամրագրված հարցադրումների վերաբերյալ,

ինչպես նաև Բանեցված թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման և տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Հաշվի առնելով վտանգավոր թափոնների, տվյալ դեպքում՝ բանեցված կապարաթթվային մարտկոցների, անվտանգ փոխադրման և պահման հարցի կարևորությունը, ինչպես նաև նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության առկայությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Գրիգորյան
Ա. Մարտիրոսյան
Ա. Եգանյան
Ե. Տերտերյան
Ա. Հարությունյան
Կ. Կարապետյան
Ս. Խաչատրյան
Ա. Առուստամյան
Վ. Խաչատրյան
Ի. Հակոբյան